ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.14. Հարավային Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

• • •

Հարավում Ափերը ողողում են Հնդկական օվկիանոսի մասը կազմող Արաբական ծովն ու Բենգալյան ծոցը: Տարածաշրջանի մեջ է մտնում մայրցամաքային ծագման Շրի Լանկա (Ցեյլոն) կղզին, որը Փոլկի նեղուցով բաժանվում է Հնդստան թերակղզուց: Կան նաև գերազանցապես օրգանական ծագման բազմաթիվ մանր կղզիներ: (Օգտվելով քարտեզից նշե՛ք դրանք):

Տնտեսության զարգացման համար կարևոր գործոն է ծովափնյա դիրքը, որի շնորհիվ էժան տրանսպորտային կապ է ապահովվում արտաքին բեռնափոխադրումների համար:

Պակիստանի և մասամբ արևմտյան Հնդկաստանի չորային շրջանները ինտենսիվ ոռոգման արդյունքում նույնպես վերածվել են հողագործական կարևոր շրջանների: Հնդստան թերակղզու կենտրոնական հատվածը զբաղեցնում է Դեկանի սարահարթը, որը ևս կարևոր երկրագործական շրջան է: Այստեղ ստեղծվել են ազգային պարկեր, որոնք աստիճանաբար դառնում են զբոսաշրջային վայրեր: Թերակղզու արևմտյան և արևելյան ափերով ձգվում են ցածր, հին, քայքայված **Արևմտյան** և **Արևելյան Գաթեր** լեռնաշղթաները, որոնց ծովափնյա ստորոտները վերածվել են լողափային զբոսաշրջության գոտիների:

• • •

Անգրագետների բացարձակ թվով տարածաշրջանը առաջինն է աշխարհում, աղքատության չափազանց բարձր մակարդակը, մարդկանց սովորույթները: Արդյունքում մեծանում է հանցագործությունների թիվը, լայն տարածում են գտնում վարակիչ հիվանդությունները: Օրինակ՝ Գանգեսը համարվում է սուրբ գետ, որի ջրերը շատ աղտոտված են: Սակայն մարդիկ այն օգտագործում են խմելու և կենցաղային այլ կարիքներ հոգալու համար, ինչը նպաստում է աղիքային և այլ վարակիչ հիվանդությունների տարածմանը:

• • •

Վերջին տասնամյակներում Հարավային Ասիայի տնտեսությունը զգալի առաջնթաց է գրանցել, հատկապես թեթև արդյունաբերության, գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման բնագավառներում: Այնուհանդերձ, տարածաշրջանի տնտեսությունը թույլ է զարգացած, ինչը պայմանավորված է ֆինանսական ռեսուրսների աղքատությամբ, բնակչության ցածր կրթական մակարդակով, 1 շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքի փոքր ծավալով: Տարածաշրջանի խոշոր երկիրը Հնդկաստանն է, որը համախառն արտադրանքի ծավալով աշխարհում առաջին հնգյակում է: Տնտեսական բավական հզոր ներուժ ունի նաև Պակիստանը:

• • •

Ուրբանացման ցածր մակարդակին զուգընթաց նկատվում է խոշոր քաղաքների սրընթաց աճ: Տարածաշրջանում հաշվվում է 1 մլն և ավելի բնակչությամբ շուրջ 60 քաղաք, որոնցից մի քանիսում բնակչության թվաքանակն անցնում է 10 մլն-ից: Քաղաքների գերխոշորացումը մեծապես պայմանավորված է հողազուրկ գյուղացիների ներհոսքով, որի արդյունքն էլ «կեղծ ուրբանացումն է»: Բնակչության միջին խտության ցուցանիշն աշխարհի տարածաշրջանների մեջ ամենաբարձրն է՝ ավելի քան 511 մարդ քառ. կմ: Այն շատ բարձր է դաշտավայրերում, ծովափնյա գոտում՝ որտեղ ցուցանիշը հասնում է 1 քառ. կմ-ում 1500 մարդու: Բանգլադեշը մեծ և միջին տարածք ունեցող երկրների շարքում աշխարհում ամենախիտ բնակեցվածն է:

• • •

Հավանաբար հիշում եք, որ մուսոնները սեզոնային քամիներ են և տարվա ընթացքում երկու անգամ փոխում են իրենց ուղղությունը, ամռանը՝ ծովից ցամաք, ձմռանը՝ ցամաքից ծով: Պատճառն օվկիանոսի կամ ծովի ու ցամաքի անհավասարաչափ տաքացումն է, երբ ցամաքը արագ տաքանում է (ինչու՞), նրա վրա հաստատվում է ցածր ճնշում, իսկ ծովը քանի որ ուշ է տաքանում, դեռ սառն է և դրա վրա հաստատվում է բարձր ճնշում: Օդը տեղաշարժվում է բարձր ճնշման մարզից դեպի ցածր ճնշման մարզ, ծովից՝ ցամաք: Դա ամառային մուսսոնն է, որը օվկիանոսից կամ ծովից առատ խոնավություն է տեղափոխում ցամաք: Տարածաշրջանի բնակչությունը հողագործության եռուն շրջանում սրտատրոփ սպասում է մուսսոնների գալստյանը: Ձմռանը տեղի է ունենում հակառակը, որն անվանում են ձմեռային մուսսոն: Ձմեռային մուսսոնի առաջացման մեխանիզմն էլ դուք ներկայացրեք:

• • •

Զափազանց կարևոր է **Ինդոս**, **Գանգես**, **Բրահմապուտրա** և մի շարք այլ գետերի տնտեսական նշանակությունը: Սրանց վերին հոսանքները բարձր լեռներում են, ուստի ունեն մեծ անկում և թեքություն, հետևաբար՝ էներգետիկ մեծ նշանակություն, իսկ միջին և ստորին հոսանքներում դանդաղահոս են, ջրառատ և ունեն առավելապես տրանսպորտային նշանակություն: Գանգեսը և Բրահմապուտրան ստորին հոսանքում միաձուլվում են՝ ստեղծելով ամենաընդարձակ դելտան աշխարհում՝ ավելի քան 75 հազ. քառ. կմ մակերեսով:

Հարավային Ասիայի ընդերքը հարուստ է վառելիքային (քարածուխ, նավթ), մետաղական (երկաթաքար, մանգան, հազվագյուտ մետաղների՝ թորիում) և ոչ մետաղական (գրաֆիտ) հանածոների պաշարներով:

• • •

Հարավային Ասիայով են անցնում արևմուտքից արևելք գնացող միջազգային ցամաքային և օդային ճանապարհները, որոնք տարածաշրջանի տնտեսական զարգացման կարևոր պայմաններից են: Հարավային Ասիայով է անցնում պատմական մետաքսի ճանապարհը: Նեպալը և Բութանը ներցամաքային, դեպի ծով ելք չունեցող պետություններ են, ինչն էապես խանգարել է դրանց տնտեսական զարգացմանը:

• • •

Բնակչությունը: Հարավային Ասիան հակադրությունների տարածաշրջան է, որտեղ բնական և մարդածին գործոնների ազդեցությամբ առաջացել են մի շարք հիմնախնդիրներ՝ անհամաչափ բնակեցվածությունը, տնտեսության զարգացման ցածր մակարդակը, գործազրկությունը, թերսնումը, կանանց բարձր մահացությունը, տղամարդկանց գերակշռությունը, կրթական ցածր մակարդակը:

• • •

Միջին դարում տարածաշրջան թափանցած մահմեդականությունը առաջացրեց մրցակցություն, թշնամանք: 1947թ. անկախացան Հնդկաստանը, Պակիստանը, Բանգլադեշը, բայց հյուսիսում Հնդկաստանի, Պակիստանի և Չինաստանի միջև դեռևս վիճելի տարածք է մնացել **Քաշմիրի** և **Ջամուի**

պետական պատկանելության հարցը, որտեղ ապրում են հնդուականներ և մահմեդականներ: Դաշտավայրերը բնակեցված են եղել անհիշելի ժամանակներից: